Հարգելի պարոն Զաղոյան,

Ներկայացնում ենք Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների պատասխան գրությունը

ՀՀ քննչական կոմիտեում ուսումնասիրվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հանձնաժողովի կողմից ներկայացված 2020-2022թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի հայտի նախագծի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները, որոնց վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում հայտնել հետևյալ նկատառումները.

ՀՀ վարչապետի մոտ բյուջեի չափաքանակների քննարկումներից հետո ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջում տեղադրվել է 2020-2022թթ ՄԺԾԾ և 2020թ. բյուջետային ֆինանսավորման լրամշակված հայտը:

Ձեր կողմից նշված առաջարկությունների և դիտողությունների դիտարկման վերաբերյալ հայտնում ենք, որ Կոմիտեի ձևավորումից ի վեր Կոմիտեի գործունեության առաջնահերթ ուղղություններից են եղել մարդու իրավունքների պաշտպանությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, ինչպես նաև՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդնումը քննչական աշխատանքում: Այդ մասին են վկայում մինչ օրս իրականացված Կոմիտեի հետևյալ նախաձեռնությունները.

1. Քրեական վարույթի մասնակիցների՝ գործերը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով.

1) ՀՀ հյուսիսում և հարավում ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների կատարման համար համապատասխան կառուցակարգերի մշակումը և ներդնումը.

2) կապի օպերատորների հետ դատարանների որոշումների և վերծանումների փոխանցման էլեկտրոնային համակարգի ներդնումը:

Վերոնշյալ միջոցառումների իրականացման արդյունքների վերլուծությունը վկայում է նախաքննության ժամկետների կրճատման, հետևաբար՝ նաև նախաքննության արդյունավետության բարձրացման մասին:

2. Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում.

Քրեական գործերի թվայնացումը, որը նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և գերատեսչական վերահսկողության, այդ թվում՝ դատավարական ժամկետների պահպանման, նախաքննությունը ողջամիտ ժամկետում ավարտելու, մարդու սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտումների կանխարգելման ապահովման միջոցով ուղղակի լծակ է հանդիսանում հակակոռուպցիոն ոլորտի համար:

3. Ժամանակակից տեխնոլոգիաների ներդնումը քննչական աշխատանքում

1)Կոմիտեի տարածքային մարմիններն ու ստորաբաժանումները կենտրոնական մարմնին կապող ներքին ցանցի ներդնումը, էլեկտրոնային արխիվի ստեղծումը.

2)«Էլեկտրոնային նախաքննություն» ծրագրի ներդնումը.

Վերը նշված միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր է դարձել ցանկացած պահի ստանալ Կոմիտեում հարուցված քրեական գործերի, դրանց շարժի և վերջնական ավարտի, ինչպես նաև՝ քրեական գործերով ներգրավված մեղադրյալների մասին տեղեկատվություն, ինչպես նաև՝ վարել էլեկտրոնային վիճակագրություն.

2015 թվականի դեկտեմբերից Կոմիտեն միացած է «mulberry» էլեկտրոնային համակարգին:

ՀՀ քննչական կոմիտեն կեղծ փողերի բացահայտման շրջանակներում փորձաքննությունները պատվիրում է ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությանը, ՀՀ արդարադատության նախարարության «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին, որտեղ գոյություն ունի կեղծ փողերի շտեմարան: Այս փորձաքննությունների կատարման համար կոմիտեն ՀՀ պետբյուջեից չի ֆինանսավորվում:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից 2020-2022թթ. ժամանակահատվածում իրականացվելու է «1180. ՀՀ քննչական ծառայություններ» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվելու են հետևյալ 5 միջոցառումները՝

1.«11001. Քրեական գործերով վարույթի իրականացում»
2.«11002. Վերապատրաստման և պատրաստման կազմակերպում»
3.«11003. ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդ»
4.«12001. Մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրների կրթաթոշակի տրամադրում»
5. «31001. ՀՀ քննչական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում»

Վերոնշյալ միջոցառումները նշված են Պարտադիր և հայեցողական ծախսերի հավելվածում, իսկ արդյունքային (քանակական և որակական) ցուցանիշները՝ հավելված 3 մաս 4-ում, որոնք մշակվել են փորձագետների հետ:

Որպես միջոցառում ներկայացված պահուստային ֆոնդի վերաբերյալ հայտնում ենք, որ բոլոր պետական մարմինների պահուստային ֆոնդերը ներառված են պետական բյուջեում որպես առանձին միջոցառում /դա բխում է ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունից/, որը սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, իսկ

Քննչական կոմիտեի պահուստային ֆոնդը նախատեսված է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով քննչական կոմիտեի ծառայողների և քննչական կոմիտեի դեպարտամենտում ծառայողների աշխատավարձի միասնական ֆոնդի երկու տոկոսին:

Ինչ վերաբերվում է նրան, որ 3-րդ կետում նշված բյուջետային ծրագրում կատարվելիք հիմնակական փոփոխությունների, կապիտալ բնույթի հիմնական միջոցառումների, ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լրացված չէ, քանի որ այդպիսիք նախատեսված չեն, որովհետև սույն թվականին ՀՀ կառավարության 13.06.19թ-ի N746-Ն որոշումով ՀՀ քննչական կոմիտեի շենքային պայմանները բարելավելու համար (վերանորոգման և հիմնանորոգման) ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 144174.9 հազ. դրամ, որից 25200.0 հազ. դրամ գումարը ՀՀ քննչական կոմիտեի տրանսպորտային միջոցներ ձեռքբերելու համար նախատեսված գումարն է, որը ևս ուղղվել է ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնի ընթացիկ վերանորոգման և ՀՀ քննչական կոմիտեի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի, Լոռու մարզային քննչական վարչության վարչական շենքերի կապիտալ հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը:

Ինչ վերաբերում է 3.1-րդ կետի նշված դիտարկմանը, հայտնում ենք, որ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների վերապատրաստման գործընթացը կարգավորվում է «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով: Վերապատրաստման տևողությունը և ժամաքանակը հաստատվում է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի կողմից: Արդարադատության ակադեմիան ուսուցման ծրագրերը կազմում է ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա, որոնք ըստ էության բխում են քննիչների մասնագիտական կարիքներից:

Պարտադիր վերապատրաստման ծրագրերին մասնակցելուց բացի, քննչական կոմիտեի ծառայողները մասնակցում են նաև այլ կրթական ծրագրերի, որոնք, որպես կանոն, ֆինանսավորվում են միջազգային կազմակերպությունների կողմից:

Հարկ է նշել նաև, որ քննիչների վերապատրաստման գործընթացը փոփոխելու համար առաջին հերթին անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ:

Ինչ վերաբերվում է Ձեզ ներկայացված համապատասխան հայտի նախագծին, ապա դրա հաշվարկները կատարվել են գործող կարգավորումների հիման վրա:

ՀՀ քննչական կոմիտե